# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
գ. Սարչապետ, Հեռ. (077)867459, sarchapet.lori@mta.gov.am

N 1043-19
*29 հոկտեմբեր 2019թ.*

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆԻՆ**

Կից Ձեզ ենք ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարի 2019 թվականի թիվ 520-524-Ա որոշումները, աշխատակազմի քարտուղարի թիվ 41 հրամանը և համայնքի ավագանու թիվ 46-Ա և 47-Ն որոշումները:

Առդիր՝ 8 էջ:

**Համայնքի ղեկավար՝** **Բորիս Բարոյան**

*Կատ.* '

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 520

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ԳՈԳԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.*

1. Սարչապետ համայնքի վարչական տարածքում, Գոգավան բնակավայրում գտնվող (վկ. N 18102019-06-0073) բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողի բաժանումից առաջացած 0.8575 հա մակերեսով հողամասին (ծածկագիր՝06-067-0219-0045) տալ փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Սարչապետ համայնք, գ. Գոգավան, փողոց 1, թիվ 10/5:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

2019թ. նոյեմբերի 23
գ.Սարչապետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 521

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ, ԳՈԳԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.*

1. Սարչապետ համայնքի վարչական տարածքում, Գոգավան բնակավայրում գտնվող (վկ. N 18102019-06-0073) բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողի բաժանումից առաջացած 0.322 հա մակերեսով հողամասին (ծածկագիր՝06-067-0219-0045) տալ փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Սարչապետ համայնք, գ. Գոգավան, փողոց 1, թիվ 10/6:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

2019թ. նոյեմբերի 23
գ.Սարչապետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 522

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ 06-092-0019-0006 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԳՐԻԳՈՐԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՕ-117-Ն <<Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածներով, <<Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին>> ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը, Հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 18.04.1991թ.-ի թիվ 03 որոշումը, <<ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ>> ԱՁ-ի կողմից կազմված հողամասի և շինությունների հատակագիծը, քաղաքացի Գրիգորի Վլադիմիրի Ղազարյանի լիազորված Ռոման Սասունի Չատինյանի (անձնագիր AN 0705290, տրված 08.11.2013, 053-ի կողմից) դիմումը, նկատի ունենալով, որ տնատիրության սպասարկման համար օրինական հատկացված 0.14211 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ: Հաշվի առնելով, որ բնակելի տունը և օժանդակ շինությունները կառուցվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը (1950-1951թթ.)

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.*

1.Վերականգնել ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի 06-092-0019-0006 կադաստրային ծածկագրի տակ գտնվող տնատիրության և սպասարկման համար հատկացված 0.14211 հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը:

2. Օրենքի ուժով ճանաչել 06-092-0019-0006 կադաստրային ծածկագրով, 0.14211 հա մակերեսով հողամասի վրա մինչև 15.05.2001թ.-ին կառուցված բոլոր շինությունները, որպես Գրիգորի Ղազարյանի (անձնագիր 12ԼԼ72890, ծնված՝ 21.07.1958թ.-ին) սեփականությունը:

3.Հողամասը չի գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60 րդ հոդվածով նախատեսված հողերի շարքին, 0.14211 հա մակերեսով հողամասի վրա 1950-1951թթ. կառուցված շենք շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահանջվող շահերը, կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների ոչ էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտի պահանջ:

4.Հողամասի սահմանները որոշվում են՝ Սարչապետ համայնքի ղեկավարի կողմից հաստատված և <<ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿ>> ԱՁ-ի կողմից կազմված հատակագծի:

5.Տնատիրությանը տալ փոստային հասցե՝ ՀՀ Լոռու մարզ, Սարչապետ համայնք, գ. Պրիվոլնոյե, փողոց 2, տուն 89:

6.Սույն որոշումով ծագող իրավունքները ենթակա են գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժանումում:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 28
գ.Սարչապետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

---

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 523

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԳԻՆԵ ԱՎԴԱԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արգինե Ավդալյանի 2019 թվականի հոկտեմբերի 28-ի հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով և ՀՀ կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ, 4-րդ և 6-րդ կետերով՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.*

1.Սարչապետ համայնքի, Նորաշեն բնակավայրի փ.Կ.Դեմիրճյան, թիվ 41 հասցեում գործող անհատ ձեռնարկատեր Արգինե Ավդալյանի հայտը բավարարել և նրան տալ ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

2.Հանձնարարել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարին՝ եռօրյա ժամկետում սահմանված կարգով հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվությունը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

2019 թ. հոկտեմբերի 28
գ.Սարչապետ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
# ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 524

## ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏ ԳՈՒՄԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.*

Գումարել Սարչապետ համայնքի ավագանու արտահերթ նիստ 2019 թվականի հոկտեմբերի 29-ին ժամը 12:00-ին, Սարչապետի համայնքապետարանի վարչական շենքում՝ ՀՀ Լոռու մարզ, Սարչապետ համայնք, գ.Սարչապետ, փողոց 1, շենք 67:

Համայնքի ղեկավար՝ ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

2019թ. հոկտեմբերի 28
գ.Սարչապետ